միայն յուխտ 'ի Ս. Տեղիս, որպէս ունէին սովորութիւն յաւուրց անտի Սէլիմայ առաջնոյ մինչ 'ի թուականն \\Է\։

Իսկ Թէոդորոս Պատրիարք կոչեաց զդատաւորն և ըզդպրապետն, և ետ ընթեռնուլ նոցա զամենայն կարեւոր գրեանս, և ըստ մտաց նոցին գրել Հէօշէրիֆ և էլամ՝ յայտ արարեալ զբովանդակ տեղիս եւ զբաժինս Հայոց։ Գրեաց նաեւ ինքն հանդերձ միաբանօք գիր աղերսական առ Պատրիարքն և առ գլխաւորս ազգին 'ի Կոստանդինուպոլիս, արիանալ եւ քաջութեամբ պաշտպանել զիրաւունս ազգին, և մի առնել զնոսա կոխան ոտից օտարաց, և զայլ կարեւոր գրեանս որոնել յարձանագրութիւնս կայսերական գիւանին, զի յերուսաղէմ ոչ կարացին գտանել զպատճէնս մեծ հրովարտակաց, զորս թախանձելով խնդրէր Ցակոբ եպիսկոպոս 1804։

Եւ մինչդեռ սոքա յայսմ խորհրդի էին ճէզար Փաշայ կալեալ զմին յերեւելեաց Ասուղօշ գիւղի Օթման անուն եդ 'ի բանտի, և եղբարք նորին դեգերեալ այսր անդր ոչ կարացին ազատել զնա. ապա եկեալ բռնացան 'ի վերայ երից վանօրէից, և 'ի նոցանէ խնդրէին զեղբայրն իւրեանց, և նոքա խոստացան գրել առ ճէզար վասն ազատութեան նորին։ Իբրեւ տեսին թէ անազանեաց պատասխան գրոյն, կալան 'ի ճանապարհի զուխտաւորս Հայոց և Ցունաց, որք գային 'ի Ցոսպէ քաղաքէ, և արգելին զնոսա 'ի գեօղն իւրեանց։ Եւ եկեալ յերուսաղէմ 'ի դուռն քաղաքին՝ յափշտակեցին զմին 'ի մանկանց Լատինաց և տարեալ եդին զնա 'ի գիւղն. պատգամ առաքեցին առ վանականս, եւ ասեն եթէ ոչ եկեսցէ Օթման՝ չիք փրկութիւն ուխտաւորաց ձերոց, թէպէտ եւ քաղաքապետան և Մուֆթին յղեցին զոմանս և խնդրեցին արձակել զնոսա, այլ չեղեւ հնար. իսկ ճէզար գրեաց առ վանօրայս թէ չէ հնար արձակել զայրն։ Վանականք հաղիւ ուրեմն զերծուցին զուխտաւորս և բերին զնոսա յերուսաղէմ։ Բդեշխն Ցոսպէի մեծամեծս սպառնայր յոչ ընդունել զիսոխանակագիր իւր, տանջանօք սպառել զկեանս վանականաց, աւերել և կործանել զվանորայս։ Սիւլէյման Փաշայ 'ի Նազարեթէ խնդրէր զգուշարս դրամոց, և 'ի չանալն սոցա, կալաւ և արգել զուխտաւորս 'ի ճանապարհի, որք գային յաշխարհէն Գամրաց,